

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐԸ ՆՈՐ
ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ. ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<https://doi.org/10.59982/18294359-24.2-hm-11>

Մարտին Անդրանիկի Մանուկյան

ի.գ.թ.

*Երևանի «Գլաձոր» համալսարան, Բրավազիտության ամբիոն
martin_manukyan_1955@mail.ru*

Անփոփագիր

Արտաքին հարաբերությունների ոլորտում ԱԺ լիազորություններն ամրագրված են Սահմանադրության 116-րդ հոդվածում, ըստ որի՝ օրենսդիրը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում այն միջազգային պայմանագրերը, որոնք՝ 1) վերաբերում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին, ինչպես նաև պարտականություններին, 2) ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ, 3) նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը, 4) Հայաստանի Հանրապետության համար նախատեսում են ֆինանսական կամ գույքային պարտավորություններ, 5) ուղղակիորեն նախատեսում են վավերացում, 6) պարունակում են օրենքի կարգավորմանը ենթակա հարցեր, 7) որոնց կիրառումը նախատեսում է օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում, կամ որոնք պարունակում են օրենքին հակասող նորմեր:

Միջազգային պայմանագրերը վավերացնելու և չեղյալ հայտարարելու իրավունքը պատմականորեն պատկանել է պետության գլխին: Սակայն ժամանակի ընթացքում միջազգային պայմանագրերը սկսեցին ավելի ու ավելի թափանցել պետությունների ներպետական իրավունքի համակարգ՝ ստիպելով վերջիններիս դրանց դրույթներին համապատասխան փոփոխություններ մտցնել ներպետական օրենսդրության մեջ: Իսկ վերջին տարիներին համաշխարհային հանրությունը հաստատեց միջազգային նորմերի գերակայության սկզբունքը ազգային օրենսդրության նկատմամբ: Դա ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում:

Արտաքին հարաբերությունների ոլորտում Ազգային ժողովի լիազորությունների թվին պետք է դասել նաև արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական ծառայությունների օրենսդրական կարգավորումները: Նշենք, որ եթե նախքան սահմանադրական բարեփոխումները Ազգային ժողովն իր միջազգային կապերն իրականացնում էր միայն Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի միջոցով, ապա դրանից հետո խորհրդարանում ստեղծվել է ևս երկու հանձնաժողով՝ 1) *Եվրոպական ինտեգրման* հարցերի մշտական հանձնաժողովը, որն զբաղվում է ԵՄ և Եվրախորհրդի հետ կապերի հարցերով և 2) *Տարածաշրջանային և եվրասիական*

ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, որն զբաղվում է եվրոպական օրենսդրության հետ ՀՀ օրենսդրության ներդաշնակեցման հարցերով:

Հիմնաբառեր. Սահմանադրություն, Ազգային ժողով, գործադիր իշխանություն, միջազգային պայմանագրեր, խորհրդարանական դիվանագիտություն, ժողովրդական դիվանագիտություն, պաշտոնական դիվանագիտություն:

Ներածություն

Պառլամենտական դիվանագիտությունը չի խախտում իշխանությունների բաժանման սկզբունքը: Ապավինելով դիվանագիտության ուժին և նկատի ունենալով ֆրանսիական բուրժուական հեղափոխության վիթխարի բռնությունները, դեռևս Թոմաս Ջեֆերսոնն է նկատել. «Ֆրանսիացիները հեղափոխության ընթացքում մեծ արյուն հեղեցին, իսկ մենք՝ մեծ թանաք» [**Графский, Всеобщая история права и государства, 444**]: Իսկ անգլիացի փիլիսոփա և քաղաքական գործիչ Էդմունդ Բերքն իր «Մտորումներ ֆրանսիական հեղափոխության մասին» աշխատությունում նշել է. «Օրենքները քիչ բանով են օգնում մարդկանց: Օրենքների պիտանելիությունը և ուժը կախված են դրանք կիրառող անձանցից: Առանց նրանց Ձեր հանրապետությունը սև ուրվագիծ է թղթի վրա և ոչ թե կենդանի, ակտիվ, արդյունավետ սահմանադրական կառույց [**Графский, История политических и правовых учений, 325-329**]: Էդմունդ Բերքնի հիշյալ աշխատությունը Լյուդովիկոս XVI-ը թարգմանեց ֆրանսերեն և հրատարակեց, բայց ինքը ևս քիչ հետևություններ արեց դրանից ու փոխհամաձայնության չեկավ հեղափոխության առաջնորդների հետ:

«Պառլամենտական դիվանագիտությունը» բնորոշվում է որպես քաղաքական կատեգորիա, որը կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից: Գիտական հանրության շրջանակներում այդ առումով միասնական մոտեցումը բացակայում է: Պառլամենտական դիվանագիտությունը կարելի է բնորոշել որպես խորհրդարանների կողմից իրականացվող գործողությունների ամբողջություն, որը միտված է արտաքին քաղաքական որոշակի նպատակների հասնելու գործընթացում քաղաքական երկխոսությունն առաջ տանելուն և զարգացնելուն:

Միջազգային հարաբերությունների բառապաշարում «պառլամենտական դիվանագիտություն» եզրույթը ներմուծվել է ամերիկացի գիտնական-դիվանագետ Ֆիլիպ Ջեսսապի կողմից, որի վկայակոչած չորս առանձնահատկությունները պառլամենտական դիվանագիտությունը տարբերակում են բազմակողմ բանակցությունների մյուս ձևերից: **Առաջինը** լայն օրակարգով մշտական գործող կազմակերպության առկայությունն է: **Երկրորդ** առանձնահատկությունը նստաշրջանների հանրային բնույթն է՝ զանգվածային լրատվամիջոցների ներգրավմամբ: **Երրորդ** տեղում Ֆ. Ջեսսապը հիշատակում է ընթացակարգի կանոնները, որոնք կարող են օգտագործվել մարտավարական նպատակներով և վերջապես՝ քննարկումների արդյունքներով ձայների մեծամասնությամբ բանաձևերի ընդունումը [**Dembinski, 253**]:

«Պառլամենտական դիվանագիտությունը» Դին Ռասկը և Ֆիլիպ Ջեսսապը ի

սկզբանե դիտարկել են բազմակողմ բանակցային գործընթացի մեջ: Թեև կան հեղինակներ (ամերիկացի քաղաքագետ Ռ. Ֆրիդհայմ և այլք), որոնք պառլամենտական դիվանագիտություն եզրույթը հենց այդ իմաստով էլ շարունակում են կիրառել, այդուամենայնիվ պառլամենտական դիվանագիտության ընկալումն աստիճանաբար ընդլայնվել է, և, ինչպես նշում է Բրյուսելի համալսարանի պրոֆեսոր Դանիել Ֆիոթը, այն միայն միջազգային ֆորումներին չէ, որ վերաբերում է, այսօր այդ հասկացությանը բնորոշ են խորհրդարանների և խորհրդարանականների միջազգային գործողությունները, որոնք կարող են լինել քիչ թե շատ ֆորմալիզացված հարաբերություններ [Fiott, 45]:

Պառլամենտական դիվանագիտությունը դեռևս լայնորեն հետազոտված չէ և եթե պրակտիկայում այն արագ զարգանում է, ապա գիտության մեջ շարունակում է մնալ տակավին չուսումնասիրված [Stavridis]: Դա է պատճառը, որ «պառլամենտական դիվանագիտություն» հասկացության համընդհանուր գիտական սահմանում - գոյություն չունի:

Սույն հոդվածի ծավալը հնարավորություն չի ընձեռում խորանալու պառլամենտական դիվանագիտությանը տարբեր գիտնականների կողմից տրվող բնորոշումների և պրակտիկայում դրա կիրառման նեղ և լայն ձևերի մեջ, ուստի հեղինակը բավարարվում է միայն նշելով, որ պառլամենտական դիվանագիտության և ժողովրդական դիվանագիտության միջև այսպես կոչված՝ «հավասարության» նշան է դրվում: «Ես չեի նույնացնի խորհրդարանական դիվանագիտությունը ժողովրդական դիվանագիտության հետ, ինչպես դա հաճախ տեղի է ունենում: «Ժողովրդական դիվանագիտությունը», ի տարբերություն պաշտոնական և խորհրդարանական դիվանագիտության, իր վրա կոնկրետ պարտավորություններ չի կրում, չի կատարում նախագահի հանձնարարությունները և չունի հստակ սահմանված արտաքին քաղաքական գործառույթներ: Դա է դրանց գլխավոր տարբերությունը», - գրում է ՌԴ Պետդուրմայի միջազգային կոմիտեի նախագահ Դ. Ռոգոզինը [Круглый стол, 26]:

Կասկածից վեր է, որ պառլամենտի գործունեությունն իր սահմանադրական լիազորությունների իրականացման ոլորտում ունի և կարող է ունենալ միջազգային նշանակություն, բայցևայնպես դժվար է չհամաձայնել գերմանացի քաղաքագետ Մ. Օբրեխթի այն դիտարկմանը, որ միայն այն դեպքում, երբ «դիվանագիտություն» ասելիս հասկանում ենք շահերի բանակցային համաձայնեցում հիմնախնդիրների ամենակիրառելի լուծումը գտնելու համար, կարելի է պատգամավորների գործունեությունը «դիվանագիտական» համարել [Obrecht, 238]: Ընդ որում, առանցքն այս դեպքում երկխոսության գաղափարն է:

«Պառլամենտական դիվանագիտությունը միջոց է, որով երկու կամ ավելի խորհրդարաններ կազմակերպում են շարունակական երկխոսություն՝ միջազգային առանցքային հիմնախնդիրների շուրջ», - նշված է խորհրդարանական զարգացման վերաբերյալ գիտելիքների գլոբալ ու առաջատար հարթակի՝ AGORA-ի կայքում [Portal

for Parliamentary Development, 27]:

ԵԽԽՎ «Պառլամենտական դիվանագիտության խթանումը» վերտառությամբ գեկույցում նշված է. «Վեհաժողովը ճանաչում է պառլամենտական դիվանագիտության բուն էությունը հանդիսացող երկխոսության և համագործակցության դրական ներդրումը միջպետական լարվածության թուլացման, մարդու իրավունքների, խորհրդարանական ժողովրդավարության, օրենքի գերակայության և այլ բարդ հիմնախնդիրների ոլորտում հնարավոր լուծումներ գտնելու գործում» [Joao Bosco, 3]:

«Պառլամենտական դիվանագիտության հիմքը հանդիսացող երկխոսության և բանակցությունների միջոցով շատ զգայուն հարցեր են հաջողությամբ լուծվել», - 2005թ. սեպտեմբերին Խորհրդարանների խոսնակների՝ Նյու Յորքում անցկացված երկրորդ համաշխարհային համաժողովում Իսլամական համաժողովի անդամ-պետությունների կազմակերպության խորհրդարանական միության (PUOICM) անունից ելույթ ունենալիս նշել է միջազգայնագետ Մ. Քիլիկը [Summary records, 45]:

Կարելի է արձանագրել նաև, որ պառլամենտական դիվանագիտությունը իրավաքաղաքական կատեգորիա է, որի հետագա ներուժը դեռ պետք է քննարկվի ու վերախմաստավորվի: Ինչպես նշում է հույն միջազգայնագետ Ս. Ստավրիդիսը՝ «Մեր ժամանակներում պառլամենտական դիվանագիտությունն այլևս փաստ է: Դասերից մեկը, որ պառլամենտական դիվանագիտությունը կարող է ուսանել տարածաշրջանային կառավարություններին, այն է, որ միջազգային հարաբերությունները գործադիր իշխանության բացառիկ առանձնաշնորհը չեն այլևս: Գլոբալացված աշխարհում հնարավորություններ կան շատ սուբյեկտների, այդ թվում և տարածաշրջանների ու նրանց համապատասխան խորհրդարանների համար: Այդպիսի զարգացման մեջ առկա է նաև ժողովրդավարացման ակնհայտ տարր, որը չպետք է անտեսվի» [Stavridis, 25]:

Ժամանակակից պայմաններում, երբ պառլամենտը և պառլամենտարիզմը ձեռք են բերել որակական նոր հասկանիշներ, պառլամենտական դիվանագիտությունն առավել քան պահանջված է: Միջազգային փորձը վկայում է ոչ միայն դրա արդյունավետության, նշանակության ու հետագա զարգացման, այլև այն մասին, որ պառլամենտական դիվանագիտությունն ունակ է ամրապնդելու երկրների միջև վստահությունը և ներազդելու առավել սուր և վիճահարույց միջազգային ու տարածաշրջանային հարցերի լուծմանը:

Կարող է հարց ծագել նաև, թե պե՞տք են արդյոք հնաշխարհի դիվանագիտական հայացքները նոր ժամանակներում: Դրան ժամանակին պատասխանել է Գ. Հեգելը. «Հին ժողովուրդների դիվանագիտությունը այնպիսի հիմք է նոր դիվանագիտության համար, որ պարզապես պետք է ընդգրկվի վերջինիս մեջ: Դա այն հիմքն է, որի վրա աճեց նոր դիվանագիտությունը» [Гегель, 45-46]: Իսկ Սոկրատեսը նկատում էր. «Արքաներն ու կառավարողները նրանք չեն, ովքեր գայիսոն են կրում, նրանք չեն, ովքեր ընտրվել են հայտնի մեծատոհմիկների կողմից, նրանք չեն, ովքեր իշխանության են հասել սակարկությունների, բռնության և խաբեության միջոցով, այլ նրանք, ովքեր կարող են

ղեկավարել» [Графский, Всеобщая история права и государства, 452]:

Եզրակացություն

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ ժամանակակից պայմաններում, երբ պառլամենտը և պառլամենտարիզմը ձեռք են բերել որակական նոր հատկանիշներ, պառլամենտական դիվանագիտությունն առավել քան պահանջված է: Միջազգային փորձը վկայում է ոչ միայն դրա արդյունավետության, նշանակության ու հետագա զարգացման, այլև այն մասին, որ պառլամենտական դիվանագիտությունն ունակ է ամրապնդելու երկրների միջև վստահությունը և ներազդելու առավել սուրև վիճահարույց միջազգային ու տարածաշրջանային հարցերի լուծմանը:

Գրականության ցանկ

1. Burgos Quezada, Burgos Mauricio y Javier Riffo Munoz, Jose 5:
2. Dembinski L. The Modern Law of Diplomacy: External Missions of States and International Organizations. Dordrecht: M. Nijhoff, 198, էջ 253:
3. Fiott D. [https://www.academia.edu/546268/On the Value of Parliamentary Diplomacy](https://www.academia.edu/546268/On_the_Value_of_Parliamentary_Diplomacy):
4. Stavridis S. Parliamentary Diplomacy: some preliminary findings, Jean Monnet Working Paper in Comparative & International Politics № 48, Political Studies Department, Universita di Catania, November 2002. http://aei.pitt.edu/591/1/jmwp_48.htm.
5. Круглый стол #26. Парламентская дипломатия. [Электронный ресурс]: Режим доступа: <http://old.mss.ru/politics/20020605-stol.html>
6. Obrecht M. Niedergang der Parlamente? Transnational Politik im Deutschen Bundestag und der Assemblée nationale. Ergon-Verlag, 2006, էջ 238:
7. Portal for Parliamentary Development: Home: Resources: Areas of Expertises: Parliamentary Diplomacy. Available at: <http://www.agora-parl.org/resources/aoe/parliamentaryinstitution/parliamentary-diplomacy>, p. 27:
8. *Joao Bosco Soares da Mota Amaral* Promoting parliamentary diplomacy. Doc. 12428 Report. Committee on Political Affairs and Democracy. *The Parliamentary Assembly of the Council of Europe*. 26 October 2010, p.3:
9. Summary records of the proceedings of the 127th IPU Assembly. Session I: Roundtable discussion: Multilateralism and the role of parliamentary diplomacy. Quebec City (Canada) 21- 26 October 2012. 46p.:
10. Stavridis S. Parliamentary Diplomacy: any Lessons for regional parliaments. Zaragoza, 2006, p. 25:
11. Гегель Г. Соч., том VIII, с. 45-46:
12. Графский В.Г. Всеобщая история права и государства. М., «Норма», 2000:
13. Графский В.Г. История политических и правовых учений. М., «Проспект», 2006, с. 325-329.

DIPLOMATIC VIEWS OF THE OLD WORLD IN NEW TIMES.
PARLIAMENTARY DIPLOMACY

Martin Manukyan

Candidate of Legal Sciences

YU "Gladzor", Department of Jurisprudence

martin_manukyan_1955@mail.ru

Abstract

In the sphere of foreign relations, the powers of the National Assembly are provided for by Article 116 of the Constitution, according to which the legislator ratifies, suspends or annuls those international treaties that: 1) concern the fundamental rights and freedoms, as well as the duties of man and citizen, 2) are of a political or military nature, 3) provide for the membership of the Republic of Armenia in an international organization, 4) provide for the financial or property obligations of the Republic of Armenia, 5) directly provide for ratification, 6) contain issues subject to regulation by law, 7) the application of which provides for the amendment of the law or the adoption of a new law, or which contain norms that contradict the law.

The right to ratify and annul international treaties has historically belonged to the head of state. However, over time, international treaties have increasingly penetrated into the domestic legal system of states, forcing the latter to comply with their provisions and make changes to domestic legislation. And in recent years, the world community has confirmed the principle of the supremacy of international norms over national legislation. This is also enshrined in Article 5 of the Constitution of the Republic of Armenia.

In the sphere of foreign relations, the powers of the National Assembly should also include legislative regulation of diplomatic missions and consular services of the Republic of Armenia abroad. It should be noted that if before the constitutional reforms the National Assembly carried out only international relations through the Standing Committee on Foreign Relations, then two more were created in the parliament: the Standing Committee on European Integration, which deals with relations with the EU and the Council of Europe, as well as issues of harmonization of the legislation of the Republic of Armenia with European legislation, the Standing Committee on Regional and Eurasian Integration.

Keywords: Constitution, National Assembly, executive power, international treaties, parliamentary diplomacy, public diplomacy, official diplomacy.

Ներկայացվել է՝ 09.09.2024թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 27.11.2024թ.